

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԵՐ

Ս. ՆՇԱՆ ՎԱՆՔ ՄԵՒԱՍԻՈՑ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ս. Նշան Վանքը կը գտնուէր Սեբաստիա քաղաքի հիւսիսային կողմը, գէտ ժամուան հեռաւորութեամբ, ուր կը նստէր թեմակալ առաջնորդը: Աւանքը երեք եկեղեցիներ՝ Ս. Նշան, Ս. Կառավար և Ս. Աստուածածին:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը իր երկրէն գաղթական գալով Սեբաստիա, 1021 թուին, ի յիշատակ Վարագայ Ս. Խաչ Վանքին, քաղաքին մօտ շինել տուաւ նոր վանք մը, որ կոչուեցաւ Ս. Նշան: Փետրոս Գետադարձ կաթողիկոսը իր կեանքին վերջին տարիները (1051—1058) անցուց Սեբաստիոյ մէջ, և հոն վախճանելով թագուեցաւ Ս. Նշան Վանքը. — Գամամ. Սեբաստիոյ, Յովհ. Սեբաստիացի, Երևան, 1974, էջ 32:

Սեբաստիոյ և Ս. Նշան Վանքի Առաջնորդներէն կը յիշենք հետեւալները:

1. — Գրիգոր Սպիհակոպոս, 1169—1199.

2. — Ստեփանոս Եպիփանոպոս, 1311. — Յուցակ Զեռ. Նոր Զուզայի, Բ. Հատոր, էջ 128, թիւ 118:

3. — Սիլենոս Արենափիսկոպոս, 1333—1369. — Երշատակարանք ժԴ. Դարի, էջ 257 և 490:

4. — Ստեփանոս Արենափիսկոպոս, Նահատակ, 1369—1387. — Հայոց Նոր Վկաները, 1903, էջ 137—150.

5. — Յովհաննես Եպիփանոպոս, 1482—1518.

6. — Յակոբ Սպիհակոպոս, 1560—1578.

7. — Սելիմսկը Արքեպաստացի, որդի ոսկեգործ Խաչատուրի, 1600—1616,

8. — Անդրեաս Արքեպիսկոպոս, 1616—1637:

9. — Ներսոս Սպիհակոպոս, 1637—1648, ուսուցիչ Շամալու Գրչի:

10. — Անդրեաս Արքեպիսկոպոս, որդի Թարոսի, 1648—1654:

11. — Մելիքսկը Արքեպիսկոպոս, որդի Կ. Պալսեցի Մինաս Քահանայի, 1654—1663:

ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ս. Նշան Վանքի Գրիշներէն ծանօթ են հետեւալները իրենց գործերով, ըստ ժամանուկագրական կարգի:

Ա. — Հայրապետ Կրօնաւոր Քահանայ, Գրիչ, 1311—1333, որդի սիր Ճուանի. արինակած է.

1. — 1311ին, մէկ Ասուածաօւեց (մասնակի). — Յուցակ Զեռ. Նոր Զուզայի, Բ. Հատոր, թիւ 118, էջ 128:

2. — 1333ին, Ճացոց մը. — Երշատ. ժԴ. Դարի, թիւ 316:

Բ. — Ներսէս Կրօնաւոր, Գրիչ, 1350ին օրինակած է Ճառէ Եպիփանու, պարոն Ալլանի պատուէրով. — Երշատ. ժԴ. Դարի, թիւ 465:

Գ. — Միխիթար Գրիչ, որդի Թամաւրի և Մուղալի, աշակերտ Մատթէոս Վարդապետի, 1487ին Յայսմաւուրէ մը օրինակած է մասամբ Ս. Նշանի Վանքին մէջ, պարոն Շնոփորի և Կողակցին Դեսպինայի պատուէրով. — Զեռ. Սեբաստիոյ, թ. 143:

Դ. — Փիլիպպոս Գրիչ Արեւելցի, 1489ին օրինակած է մէկ Ճացոց, Մատթէոս Վարդապետի պատուէրով. — Զեռ. Սեբաստիոյ, թիւ 74:

Ե. — Յովհաննէս Գրիչ, 1492ին օրինակած է Գանձարան մը. — Զեռ. Սեբաստիոյ, թիւ 134:

Զ. — Մելքիսէթ Եպիփանոպոս, Գրիչ, որդի արծաթաղործ Խոչտառուրի, աշակերտ Յովհաննէս Բարունապետի, 1604ին օրինակած է Ժողովածոյ մը Կարենը բավանդակութեամբ. — Զեռ. Արմազի, թ. 11:

Է. — Խաչատուր Բռաբերցի, Գրիչ, 1616ին օրինակած է մէկ Հարցմանց Գրիք, Գր. Տաթեացիի. — Զեռ. Դալաթիոյ, թ. 85:

Ը. — Միքայէլ Գրիչ և Մաղկող, որդի Բարզամ Գրչի, 1660ին գրած և ծագկած է Աւետարս մը. — Զեռ. Երևանի, թ. 6518:

Թ. — Յարութիւն Վրդ. Երզնկացի, Գրիչ, 1728—1738, օրինակած է.

1. — 1728ին, Մելինուրիւն Մատթէի. Գր. Տաթեացւոյ. — Զեռ. Երևանի, թիւ 9603:

2. — 1734ին, Մելինուրիւն Յովհաննու. Գր. Տաթեացւոյ. — Զեռ. Երևանի, թիւ 3010:

ԳՐԱԽՈՍՎԱԿԱՆ

«HISTORY OF THE ARMENIANS IN THE HOLY LAND»

Նոր է միայն որ առիթը ունեցանք ուշադիր կերպով աչքէ անցընելու երեք տարիներ առաջ Ս. Աթոռոյս Տպարանէն լոյս տեսած այս գիրքը, որ ուշագրաւ է մէկէ աւելի պարագաներով։ Հեղինակը՝ Գէորգ Հինդլիսն, ասկէ առաջ ծանօթ էր ընթերցող հասարակութեան «Moments» խորագրուած քերթուածներու հաւաքածոյ իր գրքոյկով, ուր կարելի է հանդիպիլ երրիմն արուեստի զգայարանքով մեզի մատուցուած մատառումի փշրանքներու։ Պր. Հինդլիսն այս անգամ իր մատածան մագնիսը գարձուցած է տարրեր կայրաւածի մը որուն արգասիքն է ահաւասիկ 65 էջնոց այս գրքոյկը, լոյս տեսած մաքուր թուղթի վրայ, ճաշակաւոր տպագրութեամբ։

Տասնըշորս գլուխներու մէջ հեղինակը կը փորձէ ցոյց տալ ամուս կապը՝ որ գոյութիւն ունեցած է հնդմէջ Հայ ժողովուրդին և Քրիստոնէկոյն այս Ս. Երկրին, Քրիստոնէութեան առաջին դարէն մինչև միր օրերը։ Յուրաքի անա-

3. — 1738ին, Ժողովածու, Առեւայեցի Սահակի պատուէրով. — Զեռ. Երեանի, թիւ 1953։

Ժ. — Յակոբ Վրդ. Աերաստացի, Դրիչ, 1769—1770, օրինակած է։

1. — Խորնդասեր, 1769ին. — Զեռ.

Ս. Յ. թիւ 2280։

2. — Խորհրդասեր, 1770ին. — Արտ. Արք. Արեւածեան, Ցուցակ Զեռ. Հալէպի, Երևանադ, 1935, էջ 393։

ԺԱ. — Մինաս Արեղայ, Գրիչ, 1791ին օրինակած է Պարոզիիք Նախան Յակոբ Պատրիարքի. — Զեռ. Արմաշի, թիւ 134։

Ն. Արք. ՄՈՎԱԿԱՆ

պատին մէջ զարգացած ճգնաւորական կենաքին, Մրասանդիներու շինութեան գործին և քրիստոնէական առաջին դարերու մշտկոյթին ու քաղաքակրթութեան կերտումին մէջ իրենց պատուարեր ու գնահատելի մասնակցութիւնը բերած են զաւակները միը ժողովուրդին։

Տրամութիւն է հաստատել թէ իր գրախան ճակատագրին բերումով, Հայ ժողովուրդը, որ մէկն է աշխարհի հստագոյն ժողովուրդին և որուն բերած նպաստը քրիստոնէական ընդհանուր քաղաքակրթութեան ու մշտկոյթին՝ ունեցած է միշտ իր պատուարեր կշիռը, անծանօթ կը Թայ յաճախ մէծ ու յառաջտգէմ ժողովուրդներու զանգուածներուն։ Գ. Հինդլիսն և նժան հրատարակութիւններով հրապարակ իջնող հեղինակներն են որոնք կը լրացնեն այս կարեւոր պահածը, կատարելազ Հայը ստարին լաւապէս ու ճշգրտորէն ծանօթացնելու անգնահատելի բարիքը։

Կը չնորհաւորենք Պր. Հինդլիսնը իր այս չնորհակալ աշխատութեան համար։

Գրքին ետեղ կեցող պատկառելի ցանկը հայ և մանաւանդ օտար աղքիւրներու, որոնց գիմած է հեղինակը այս գործի պատրաստութեան ատեն, ապացոյցն է այս ազնիւ զգացումին և եռանդին թիւն՝ որ հեղինակինն է, երբ իր բազմաթիւ զրադումներուն իրմէ խլած ժամերէն անդին Թայցող սուլ պահերը գիտցած է օգտագործել, այսպիսի կարեւոր ուսումնասիրութիւններով պարապելու։

Կը մազթենք որ Գ. Հինդլիսնի գրիչը չարունակէ արտադրել հայութեան անցեալին վրայ աւելի լոյս սփռող ու մեր պատիւը օտարներուն առջն բարձր բանող այլ հրատարակութիւններ։

ԳէՈՐԳ Ս. ՃԻՆԻՎՈՂԵԱՆ

